Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

343.2
Ч-21

[1932]

ᲓᲔᲒᲣᲚᲔᲑᲐ ᲐᲓᲛᲘᲜᲘᲡᲢᲠᲐᲢᲣᲚ ᲒᲐᲓᲐᲬᲧᲕᲔᲢᲘᲗᲐ ᲨᲔᲡᲐᲮᲔᲑ
Საქ. ᲡᲡᲠ ᲨᲘᲜᲐᲡᲐᲠᲗᲐ ᲙᲝᲛᲘᲢᲔᲢᲘᲡ ᲐᲠᲥᲘᲕᲘ
17 MAY 2013
Საქ. ᲡᲡᲠ ᲨᲘᲜᲐᲡᲐᲠᲗᲐ ᲙᲝᲛᲘᲡᲠᲗᲐ საბჭოს და ეკონომიური საბჭოს საქმეთა მმართველობა
04 MAR 2010

ᲙᲐᲜᲝᲜᲐᲓᲠᲝᲑᲘᲗᲘ

ᲕᲐᲠᲩᲐᲙᲐᲜ ᲞᲐᲢᲘᲟᲜᲔᲠᲘᲡ ᲛᲐᲡᲘᲡ

[Հաստատված և Համավրացնական կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Վրաստանի ՍՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1931 թ. սեպտեմբերի 17-ի վորոշումով (ՀՍԽՀ Ո. Ժ. 1931 թ. № 20, հոդ. 206, 207) մինչև 1932 թ. դեկտեմբերի 31 փոփոխություններով]։

ՀԱՏՎԱԾ I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Վարչական կարգով պատիժ նշանակելը թույլ է տրվում միայն հետևյալ դեպքերում՝

ա) յեթե պատիժները սահմանված են օրենքով.

բ) յեթե պատիժները սահմանված են գերատեսչությունների վորոշումներով օրենքով նշած դեպքերում և սահմաններում.

գ) յեթե պատիժները սահմանված են տեղական խորհուրդների և գործադիր կոմիտեների վորոշումներով, օրենքով մատնանշած դեպքերում և սահմաններում։

ՀԱՏՎԱԾ II.

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2. Այն խախտման մասին, վորն առաջ է բերում վարչական պատիժ, կազմվում է արձանագրություն։

Արձանագրությունը կազմվում և խախտման վերաբերյալ քննությունը կատարվում է այն ընդհանուր կանոններով, վոր սահմանված են հանցանքների նախնական քննություն կատարելու համար։

Արձանագրությունը կազմում և քննությունը կատարում են միլիցիայի մարմինները և այլ պաշտոնատար անձինք, վորոնց այդ իրավունքը վերապահված է օրենքով։ Գյուղական վայրերում գործի քննությունը և արձանագրություն կազմելը կարող է կատարել գյուղական խորհրդի անդամը կամ գյուղական կատարածուն։

Արձանագրությունը ներկայացնվում է մեղադրվողին, վորին վերապահվում է գրել իր բացատրությունները։

5329-53

36.440

2. Արձանագրությունը կազմելուց հետո անմիջապես ուղարկվում է ըստ պատկանելության այն մարմին, որը լիազորված է վարչական պատիժ նշանակելու, 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն։

3. Վարչական պատիժները նշանակում են վարչական պատիժներ նշանակող հանձնաժողովները, եթե որենքով կամ պատիժ սահմանող այլ ակտում այլ ցուցմունք չկա այդ մասին։

4. Նշած հանձնաժողովները կազմվում են շրջանային գործադիր կոմիտեներին կամ քաղաքային և քաղաքային ռայոնական խորհուրդներին կից։

Հանձնաժողովների կազմի մեջ մտնում են՝ միլիցիայի համապատասխան կառավարչությանը պետը կամ նրա տեղապահը, ինչպես հանձնաժողովի նախագահ և խորհուրդների ու գործադիր կոմիտեների վարչական-իրավական սեկցիաների անդամները, իսկ որտեղ այդպիսի սեկցիաներ չեն կազմված—համապատասխան խորհուրդների և գործադիր կոմիտեների անդամները որպես հանձնաժողովի անդամներ։

Այն քաղաքներում, ուր չկան միլիցիայի կառավարչություններ, հանձնաժողովի մեջ ինչպես նախագահ մտնում է խորհրդի նախագահության անդամը, ընդ սմին այս դեպքում հանձնաժողովի անդամներ են հանդիսանում խորհուրդների վարչական-իրավական սեկցիայի անդամները։

Այն քաղաքներում, ուր չկան ոչ միլիցիայի վարչություններ, ոչ էլ խորհուրդների վարչական-իրավական սեկցիաներ, վարչական պատիժները նշանակում են խորհրդի նախագահությունները։

[1932 հոկտ. 23. (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24. հոդ. 236)։

5. Ի բացահանություն 4-րդ հոդվածում նշած կանոնից՝

ա) արձանագրություններն այնպիսի խախտումների մասին, որը կատարել են ԽՍՀՄ, ԱՍՖԽՀ, ՎՍԽՀ և այլ հանրապետությունների կամ ինքնավար մարզերի կենտրոնական գործադիր կոմիտեների և ժողովրդական կոմիսարների խորհրդի անդամները, հանրապետությունների և ինքնավար մարզերի դատախազները, նաև ռայոնական գործադիր կոմիտեների նախագահներն և իրրև ինքնուրույն վարչա-տնտեսական միավորներ դասված քաղաքների քաղաքային խորհուրդների նախագահները ՎՍԽՀ միլիցիայի Գլխավոր կառավարչության միջոցով ներկայացնվում են համայն Վրաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությանը անմիջապես լուծելու կամ պատշաճ ուղղություն տալու համար։

Արձանագրություններն այնպիսի խախտումների մասին, որը ինքնավար հանրապետությունների և ինքնավար մարզերի տերիտորիայի վրա կատարել են այս հանրապետությունների կամ մարզերի կենտրոնական գործադիր կոմիտեների անդամները, այս հանրապետությունների կամ մարզերի դատախազները, նաև ռայոնական գործադիր կոմիտեների նախագահները և իրրև ինքնուրույն վարչա-տնտեսական միավորներ դասված քաղաքների քաղաքային խորհուրդների նախագահները ներկայացնվում են այս հանրապետությունների ու մարզերի կենտրոնական գործադիր կոմիտեների նախագահությունների անմիջապես լուծելու համար։

բ) արձանագրություններն այն խախտումների մասին, որը կատարել են ռայոնական գործադիր կոմիտեների, քաղաքային և գյուղական խորհուրդների անդամները, դատավորները, դատախազները և քննիչները լուծելու համար ներկայացնվում են համապատասխան ռայոնական գործադիր կոմիտեների և իրրև ինքնուրույն վարչա-տնտեսական միավորներ դասված քաղաքների քաղաքային խորհուրդների նախագահություններին։

գ) արձանագրություններն այնպիսի խախտումների մասին, որը կատարել են ոտարերկրյա պետությունների դիպլոմատիական և հյուպատոսական ներկայացուցիչները ՎՍԽՀ միլիցիայի Գլխավոր կառավարչության միջոցով ուղարկում են ԽՍՀ Միության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ԱՍՖԽՀ կառավարության կից գտնվող լիազորին։

դ) արձանագրություններն այնպիսի խախտումների մասին, որը կատարել են փոքրահասակները կամ մինչև 16 տարեկան անչափահասները, ուղարկվում են անչափահասների գործերի հանձնաժողովներին։

6. Եթե այս կամ այն խախտման մասին գործը իր քննության և առել դատարանը, մեղադրվողը չի կարող նույն խախտման համար պատժի ենթարկվել վարչական կարգով, բացի այն դեպքից, եթե դատարանը գործը ուղղել է քննելու համար վարչական կարգով։

7. Վարչական կարգով պատիժ նշանակելու մասին վորոշումը կարելի է հանել խախտում կայացնելու որից միայն երկու ամսվա ընթացքում, եթե որենքում այդ մասին այլ ցուցմունք չկա։ Այս ժամկետը անցնելուց հետո գործը պետք է կարճվի։

Այն դեպքում, երբը գործը սկզբումը եղել է դատական կամ քննչական մարմինների վարույթի մեջ, մատնանշած երկու ամսվա ժամկետը հաշվվում է այն որվանից, երբը գործը ուղղվում է համապատասխան վարչական մարմնին։

8, Վարչական պատիժ չի կարելի նշանակել այնպիսի արարքի համար, որը, թեև կատարման պահին հանդիսանում եր խախտում, բայց վորոշում կայացնելու որը դադարել է խախտում լինելուց (խախտված ակտի (որենքի, պարտադիր վորոշման և այլն) փոփոխման, վերացման կամ ներգործության ժամկետի ավարտման պատճառով։

9. Վարչական պատիժը նշանակվում է այնպիսի արարքի համար, որը ճշտությամբ համապատասխանում է խախտման նշաններին, որը նախատեսված է որենքով, պարտադիր վորոշումով կամ այլ ակտով, որի զորությամբ պատիժ է նշանակվում։

10. Վարչական կարգով կարելի է նշանակել միայն այն պատիժն և այն սահմաններում, որ որոշված է տվյալ խախտման համար օրենքով, պարտադիր որոշումով կամ համապատասխան այլ ակտով (հոդ. 1).

Չի թույլատրվում միացնել պատժի զանազան միջոցները, եթե համապատասխան ակտով միացնելու իրավունքը չի նախատեսված։

11. Վարչական պատժի տեսակն և չափը որոշելիս պատիժ նշանակող մարմինը պետք է հաշվի առնի կատարած խախտման բնույթը, մեղադրվողի հասակը, սոցիալական և նյութական վիճակը։

12. Պատիժ նշանակելու մասին որոշում պետք է շարադրվի գրավոր ձևով։

Նրա մեջ պետք է նշել՝

ա) իշխանության մարմինը, որը որոշում է հանել.

բ) որոշում հանելու ժամանակը—տարին, ամիսը, օրաթիվը.

գ) մեղադրվողի ազգանունը, անունը, հոր անունը, հասակը և սոցիալական վիճակը.

դ) խախտում կատարելու տեղն և ժամանակը.

է) այն գործողությունները, որոնց մեջ արտահայտվել է խախտումը.

զ) արարքը նախատեսող օրենքը, պարտադիր որոշումը կամ այլ ակտը.

ե) նշանակած պատժի տեսակն և չափը։

Որոշումը պետք է ստորագրեն որոշում հանող մարմնի նախագահն և քարտուղարը։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 236)]։

13. Պատժի նշանակման վերաբերող որոշման պատճենը պետք է հանձնել այն անձին, որին պատիժ է նշանակած և միևնույն ժամանակ հայտարարել նրան վերանայելու և դանդաղարկման վերաբերյալ խնդիրք տալու կարգն և ժամկետները։

ՀԱՏՎԱԾ III.

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳԱՆԳԱՏԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Վարչական պատիժ նշանակելու մասին որոշման պատճենը հանձնելու օրից հետո հինգ օրվա ընթացքում պատժի ենթարկած անձը կարող է դանդաղարկել այս որոշումը։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 236)]։

Դանդաղները տրվում են՝

ա) վարչական պատիժներ նշանակող այն հանձնաժողովների որոշումների դեմ, որ կազմված են ռայոնական գործադիր կոմիտեներին, քաղաքային և քաղաքային ռայոնական խորհուրդներին կից—համապատասխան ռայոնական գործադիր կոմիտեների, քաղաքային և քաղաքային ռայոնական խորհուրդների նախագահություններին, ըստ պատկանելության.

բ) քաղաքային խորհուրդների նախագահությունների որոշումների դեմ 4-րդ հոդ. նախատեսած դեպքերում—համապատասխան ռայոնական գործադիր կոմիտեի նախագահությանը.

գ) ռայոնական գործադիր կոմիտեների և իբրև ինքնուրույն վարչատնտեսական միավորներ դասված քաղաքների քաղաքային խորհուրդների նախագահությունների որոշումների դեմ, 6-րդ հոդ. «բ» կետում նախատեսած դեպքերում—Համավրացական կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ ինքնավար հանրապետությունների և ինքնավար մարզերի կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությանը.

Ծանոթություն. — Կենտրոնական գործադիր կոմիտեների կողմից կայացրած որոշումները յենթակա չեն դանդաղարկման։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 236)]։

16. Դանդաղը կարելի է տալ, թե այն մարմնի միջոցով, որը նշանակել է վարչական պատիժ, թե անմիջապես այն մարմնին, որ նշված է 15-րդ հոդվածում։

Այն դեպքում, երբ դանդաղը տրվում է պատիժ նշանակող մարմնի միջոցով, վերջինս յերեք օրվա ընթացքում պետք է ներկայացնի դանդաղն ըստ պատկանելության բոլոր իր գործավարության հետ միասին կամ վերանայի պատիժ նշանակելու մասին իր որոշումը, յեթե դանդաղ տալու հետևանքով յերևան են գալիս նոր հանգամանքներ։ Դանդաղը ըստ պատկանելության ներկայացնելիս, պատիժ նշանակող մարմինը կարող է կցել իր բացատրությունը։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 236)]։

17. Դատախազության մարմինները իրավունք ունեն բողոքարկել վարչական պատիժներ նշանակելու և գործը կարճելու մասին որոշումները։

18. Պատիժ նշանակելու մասին որոշման դեմ դանդաղ տալը կամ դատախազի բողոքը կասեցնում են պատիժ նշանակելու մասին որոշման ի կատար ածումը։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 236)]։

19. Գանգատի հիման վրա վարչական պատիժ նշանակելու մասին վորոշումը վերանայելիս, վարչական պատիժը կարող է փոխարինվել նրա այլ տեսակով, բայց առանց ավելացնելու պատժի ծանրությունը, կարելի է հետաձգել ի կատար ածումը, իսկ դրամական վճարները մասնատել, նվազեցնել կամ բոլորովին վերացնել։

Վորոշման պատճենը հաղորդվում է մեղադրյալին, իսկ յեթե վորոշումը կայացել է գատախազի բողոքի հիման վրա, պատճենը հանձնվում է և վերջինիս։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Ժ. 1932 թ. № 24, հոդ. 236)]։

20. Նախահայտ անկանոն պատիժ նշանակելու համար պատիժ նշանակողը յենթարկվում է քրեական պատասխանատվության քրեական որենսգրքի 114 հոդ. հիման վրա։

21. Ռայոնական գործադիր կոմիտեների, քաղաքային և քաղաքային գայոնական խորհուրդների՝ գանգատի կամ բողոքի հիման վրա կայացրած վորոշումները վերջնական են և յենթակա չեն հետագա գանգատարկման։

[1932 թ. հոկտեմբերի 23-ին (ՎՍԽՀ Ո. Հ. 1932 թ. № 24, հոդ. 236)]։

ՀԱՏՎԱԾ IV.

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԻԺՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ Ի ԿԱՏԱՐ ԱԾՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Պատիժ նշանակելու մասին վորոշումն ի կատար են ածում միլիցիան և պյուղական կատարածուները։

23. Վարչական կարգով պատիժ նշանակելու մասին վորոշումը պետք է ձեռնտուխ լինել ի կատար ածելու վճռի որենքի ուժ ստանալուց վոչ ուշ քան յերկու ամսվա ընթացքում։ Այն վորոշումը, վորի ի կատար ածմանը նշած ժամկետի ընթացքում ձեռնամուխ չեն յեղած, կորցնում է իր ուժը։

Ծանոթություն.—Պատիժ նշանակելու մասին վորոշումը համարվում է ուժ ստացած, յերբ անցել է նրա գանգատարկման համար սահմանած ժամկետը (հոդ. 14), յեթե գանգատ կամ բողոք չի տրված։

Ռայոնական գործադիր կոմիտեների և քաղաքային խորհուրդների նախագահությունների վորոշումները, վոր կայացած են գանգատի կամ բողոքի հիման վրա (հոդ. 21), ուժ են ստանում վորոշում կայացնելու պահից։

Կենտրոնական գործադիր կոմիտեների նախագահությունների վորոշումները ուժ են ստանում վորոշումը կայացնելու պահից։

24. Յերբ վարչական պատիժ է նշանակվում տուգանքի ձևով, տուգանքի գումարը խախտողը պետք է ներկայացնի ստանալով համապատասխան ընկալագիր պետական բանկի տեղական գործակալությանը կամ այն գյուղական խորհրդին, վորտեղ կատարվել է խախտումը կամ վորտեղ բնակվում է խախտողը։ տուգանքը պետք է ներկայացնել տասն որվա ընթացքում հաշվելով այն որից, յերբ հայտարարվել է խախտողին պատիժ նշանակելու մասին վորոշումը։

Տուգանքների հարկադիր գանձումը կատարվում է նույն հոդվածի առաջին մասում հիշած ժամկետը անցնելուց հետո և իրագործվում է դարձնելով գանձումը ընդհանուր կարգով խախտողի գույքի վրա։

Վարչական կարգով նշանակվող տուգանքները հարկադիր կերպով գանձելիս կիրառվում են հարկեր գանձելու վերաբերյալ կանոնադրության 17, 18 և 21 հոդ.։ (ԽՍՀՄ Ո. Ժ. 1925 թ. № 70, հոդ. 518, 1928 թ. № 2, հոդ. 10 1992 թ. № 71, հոդ. 672)։

Վարչական կարգով նշանակված տուգանքի գանձումը չի կարելի դարձնել բանվորին կամ ծառայողին վարձատույից հանող աշխատավարձի վրա, բացի այն դեպքերից, յերբ տուգանքը նշանակվել է այնպիսի պարտադիր վորոշումների խախտման համար, վոր հրատարակել է աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը բանվորական ույժի վարձակալության, աշխատանքի պաշտպանության և սոցիալական ապահովագրության հարցերի վերաբերյալ յերբ գանձումը կարելի է դարձնել և տուգանածին հասանելի աշխատավարձի վրա։

25. Հարկադիր աշխատանքը կրում են այն կարգով, վոր սահմանված է ուղղիչ-աշխատանքային որենսգրքի առաջին մասի IV գլխում (Ո. Ժ. 1930 թ. № 11, հոդ. 149)։

26. Ազատությունից զրկվելը կատարվում է այն կարգով, վոր սահմանել է ուղղիչ-աշխատանքային որենսգիրքը։

27. Այն վորոշումները, վորոնցով վարչական պատիժը հարկադիր աշխատանքի կամ ազատությունից զրկելու ձևով դրվում է բանվորա-գյուղացիական կարմիր բանակի շարքերում գտնվող զինվորական ծառայողների վրա, պետք է ի կատար ածվեն քրեական որենսգրքի 30^1 և 30^2 հոդվածներում նշած կարգերի համաձայն։ (Ո. Ժ. 1929 թ. № 1, հոդ. 5. 1930 թ. № 15, հոդ. 227)։

28. Այն դեպքում, յերբ վարչական պատիժ նշանակելու մասին վորոշումն ի կատար ածելիս պարզվում է, վոր պատժի տեսակն և չափը չի համապատասխանում կատարած խախտման բնույթին, խախտողի սոցիալական վիճակին կամ նրա ստացվածքային կարողությանը, վարչական պատիժ

նշանակող մարմինը կարող է փոխարինել պատժի մեկ սեռակը մյուսով, որ նշանակված է այն ակտի մեջ (որենքի, պարտադիր վորոշման և այլնի մեջ), վորի զորությամբ պատիժ է նշանակված, չավելացնելով սակայն նրա պատժի ծանրությունը, կարող է հետաձգել կատարումը, պակասեցնել չափը կամ բոլորովին վերացնել, նաև մասնատել դրամական վճարները։

29. Վարչական պատիժը ի կատար չի ածվում և սկսած կատարումը դադարեցնվում է, յեթե այն արարքը, վորի համար պատիժ է նշանակվել, թեև խախտում եր համարվում նրա կատարման պահին, բայց հետագայում դադարել է խախտում լինելուց, վորովհետև խախտված ակտը փոփոխվել, վերացվել է կամ նրա ներգործության ժամկետն անցել է։

ԳԱԼԻԴՐԱՖՏՐԵՍՏԻ Ի-ԻՆ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ 204. Պատվեր 352. Տիրաժ 200.

343.2
4-21

ՀԱՅԿ ԱՍՍՀ

<< Ազգային գրադարան
NL0219323

36.740